

26n
715-718, 2347

1997-7

на пушка и пистолет. 30/IX 1900, КПЗ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄՑՆԵՐՆԵՐ

ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐ

ФИЛОСОФІЯ ФОРМЫ

P h o t o l y s i s

Тип. Груз. Изд. Т—ва. ||| Տպարան Վրաց Հրատ. Ընկ.

1900

Доз. цензурою, Тифлисъ, 3-го Января 1900 г.

9 717-60

28. 7. 17

ՄԵԼԻՔ-ԲԵԳԱՆԱՐ

I

Երազի նման՝ անցան, գնացին
Այս երանաւէտ օրերը նախկին,
Երբոր Թարթարի ափերին դալար
Քարդաւաճում էր Գիւլիստան աշխարհ:
Այնժամ մեր վերջին կանթեղը փառքի,
Խոստանալով մեզ բաղդի, պարծանքի
Թարատե օրեր, վառւում էր խաղաղ,
Լոյսը տարածում ամբողջ Ղարաբաղ:
Այնժամ երկնաբերձ լեռների լանջում
Հայոց քաջների ձայնն էր հնչում.
Եւ այդ յաղթական ձայնից ահաւոր
Սարսափում էին դաշտեր, լեռն ու ձոր:
Եւ Գիւլիստանի բերդն անառիկ
Զարանենդ, լսիր խաներին պարսիկ
Իր բարձունքներից մահ էր ըսպառնում,
ՄԵլք-Խևոսուքի անունն օրհնում:
Եւ Փանահ-խանի հզօր բերդերը՝
Քայաթ, Ասկարան՝ հայ կտրիճները

Այնժամ հիմնովին կործանել էին,
Սրի ու հրի մատնել թուրքերին:

II

Քաջ Մելիք-Խւսուր մանկութեան օրից
Սուրը չէր թողել երբէք իր ձեռից.

Իր ամբողջ կեանքը նա անց էր կացնում
Ճակատամարտում, ուազմի դաշտերում.

Երկար տարիներ եռանդուն, անվախ՝
Պահեց Գիւլիստան ազատ և անկախ.

Նորա հողի մէջ երբէք թշնամին
Չէր համարձակում մօտենալ հային:

Արիւնհեղութեան ըռպէին դաժան
Բէզլար որդին էր աջակից նորան.

Իսկ սորա ընկեր, աջակիցըն էր՝
Անվախութիւնը, ողին անվեհեր:

Եւ Մելիք-Խւսուր արդէն ծերացած,
Ճակատամարտից յոդնած, վաստակած՝

Քաջարի որդուն կանչեց իրա մօտ
Եւ յանձնեց նորան սուրն արիւնոտ:

Իր մահից առաջ կըտակեց նորան՝
Անսասան թուրք չը գնել պատեան,

Մինչեւ թշնամուց չիստակւի Սիւնիք,
Թուրքից չ'ազատւի բոլոր հայրենիք:

III

Եւ իր հայրական այդ սրբանըւէր
Աւանդն առաւ որդին անվեհեր,

Համբուրեց նորան, երդեց—յաւիտեան,
Մինչեւ իր վերջին կաթին արեան,
Կուել, հալածել գարշել թուրքին, ար միարք
Արթուն պահապան լինել իր աղգին...
Մէջքին կապած թուր, ուսին հրացան,
Մեր կտրիները ահա մօտեցան, գմանաւայ ով
Զահէլ իշմանի առաջ շարեցին,
Հընալպանդութեան սուրբ խոստում տւինւա
Եւ քաջ Բէզլարի զինակիցները
Զէին մոռացել այն մութ գիշերը,
Երբ նենդ Շահվերդու որդին ստահակ
Յանկարծ պաշարեց Խւսուրի բանակ,
Որ սրի մատնի քնած մելիքին,
Գերի, կոտորի հայոց գօրքերին.
Բայց այնժամ Բէզլար՝ կայծակի նման՝
Խւկոյն սլացաւ թուրքի յանդիման,
Կոսորեց, զարդեց լկտի թշնամուն
Ու Գանձակ խուկեց պիղծ խանի որդուն...

IV

Եւ կտրիները մէկ-մէկ յիշելով
Բէզլարի գործքը, ջերմագին սրտով
Քարեմաղթեցին ջահէլ իշմանին
Երկար տարիներ, օրեր ինսդագին.
Եւ թշնամու գէմ ամենը զինւած,
Հերթով պազեցին սուրը ժառանգած:
Ողջ Գիւլիստանի զէկն իր ձեռին,
Խըրախոյս կարգաց Բէզլար քաջերին,

Տւաւ ամենքին առատ նւէրներ,
Ազգային պարտքի սուրբ պատիրաններ.
Նա սպառնաց այն դարշ, զագիր մատնիչին,
Որ՝ Վասակի պէս՝ իր հայրենիքին
Կը դաւաճանի, կը ծախի հաւատ,
Մեր եկեղեցուց կը լինի անջատ...
Օ՛, այնպիսի զեղիս, նենդ հային գծուծ
Բէգլար կախ կը տայ Ղանլու-շինարուց,
Գանդը կը փշրի ահեղ գնդակով,
Կուրծքը կը ճեղքի պողպատէ սլով,
Եւ նորա անթաղ դիակը նեխւած
Կերակուր կը տայ չներին քաղցած!...

V

Երբ արշալոյսը՝ հրդեհի նման՝
Գրկեց երկինքը վաղ առաւօտեան—
Հեռու, երկնարերձ լեռների ետե,
Ահա բարձրացաւ ոսկեփայլ արև.
Եքեղ բնութեան մեծապանծ արքան
Իր ցոլքը սփռեց ամբողջ Գիւլիստան,
Ոսկեզօծելով անտառ, դաշտ ու սար,
Զարթեցրեց քնից բովանդակ աշխարհ:
Խարխափուտ ձորում, անտառի միջին,
Ուր հաւքերըն են երգում քաղցրագին,
Ուր արծաթափայլ վտակն է հոսում—
Մի ապարանք էր հըրաշակերտւած.
Եւ ամեն կողմից ծառերը շարւած՝
Լուռ հսկում էին, իրրեւ պահապան,

Դալար ոստերով ըսկօղում նորան:
Նորա առաջին, չքեղ ծաղկոցում,
Անուշ բուրմունքով վարդն էր ժպտում,
Մեխակների ու շուշանների մէջ
Նախչուն թիթեռն էր թուշկոտում անվերջ:

VI

Եւ պատշգամբում, իրրև թագուհի,
Յանկարծ երևաց մի գեղեցկուհի...
Եւ իսկոյն նորա առջև նսեմացան
Հրաշալիքները չքեղ բնութեան.
Եւ բուրաստանի գոյն-գոյն ծաղիկներ,
Եւ կանաչագարդ անտառի ծառեր,
Եւ մետաքսապատ դալարոտ գետին,
Եւ ջինջ ու պայծառ, կապուտակ երկին՝
Զքնաղ դիցուհուն հեռւից նայելով,
Տէին երանի բուռն նախանձով:
Նա լուռ կանգնած էր փերիի նման,
Յառել աշերը դէսկի հեռաստան.
Մեղմիկ զեփիւռը շոյում էր հանդարտ
Նորա կիսամերկ կուրծքը հրաշտգարդ,
Ճեղիկ ծածանում անհիւս, անինամ,
Թաւշեայ մազերը չքեղ ու փարթամ:
Անուշ դայլայլով հաւքերը նախչուն
Երդ էին ձօնում չքնաղ դիցուհուն,
Գովում սիրավառ աշերը գոհար,
Գովում հրաշագեղ ունքերը կամար...

VII

Ո՞վ է հիասքանչ այդ գեղեցկուհին.
Ո՞վ է անտառի այդ հիւրի-փերին.
Յաւէրժահամբ է, թէ աստւածուհի.
Թէ գեղ Աստղիկն է Հայոց աշխարհի:
Ոչ, Բալան է դա!.. Այն հզօր Բալան,
Որ չքնաղութեամբ յաղթեց անսասան,
Տոկուն, քաջարի Մելք-Բէղլարին արքունը ալ
Եւ տիրեց նորա հոգու լարերին... այս օպարձով
Ալանաց կոյսի, Սաթինիկի պէս, զուս մորիս ալ
Բալան սեաչեայ ու չքնաղատես ողձմբիցուց
Զահէլ իշխանին դիւթեց, հմայեց
Եւ նորա սիրաը սիրով հրդեհեց...
Եւ Մելք-Բէղլար կուրացած սիրուց,
Հրաժարւեցաւ իր հէտ ամուսնուց—
Իր հաւատարիմ գեղ Ամարնանին
Նա դաւաճանեց, անտառի միջին
Կերտեց հեշտանքի, սիրոյ ապաստան...
Եւ այժմ կանգնած Բալան աննման,
Անհամբեր սրտով հեռուն է նայում
Եւ սիրաբորբոք մելքին սպասում...

VIII

Եւ ահա յանկարծ հեռւից երեւաց
Մելք-Բէղլարը՝ նժոյզը հեծած...
Բալայի սիրաը բարախեց ուժգին,
Բերկանքը խաղաց երկնային դէմքին:

9

Զահէլ մելքը բեղերը սրած,
Մորթէ զիսարկը զիսին թեք դրած,
Գոտիկից կախած արծաթապատեան
Մահարեր դաշոյն, ուսին հըրացան,
Ըսպաւագինւած հայրական սրով,
Խարխափուտ ձորը իջաւ կածանով:
Հըլու, հընազանդ թիկնապահները
Հետեւում էին՝ հեծած ձիերը.
Պայծառ արևի ճառագայթներից
Շողշողում էին զէնքերը հեռւից:
Եւ շքախմբից ահա ջոկւեցաւ
Թիկնապահ Լալան, առաջ սլացաւ,
Բացեց դիցունու շքեղ տան դուռը,
Ցայտնեց իշխանի դալստեան լուրը...
Բայց նա այդ գիտէր... Մի քանի վայրկեան—
Բէղլարի կլծքին սեղմըւեց Բալան...

IX

Երկնակամարում, զիշերւայ կիսին,
Ամպերի միջին լողում էր լուսին.
Նա մերթ ծածկում էր մըռայլուտ քօղով,
Մերթ լուսաւորում երկիրը շողով:
Հանդիսած քնած էր ամբողջ Դիւլիստան.
Բայց գեռ զարթուն էր թշւառ Ամարնան:
Նա անքուն նստած առանձնութեան մէջ,
Գառն լալիս էր, հեկեկում անվերջ.
Անիծում էր իր տարտամ վիճակը,
Ողբում իր կորցրած թագն ու պըսակը...

«Օ, անգութ Բէզլար, դաւաճան Բէզլար! Այս Ամպէտ գու կեանքս փշբեցիր իսպառ,
Բայց քեզ խղճում եմ՝ քեզ չեմ նախատիւ.
Իմ լեզուն երբէք քեզ չի անիծիլ...
Ես քեզ կը մաղթեմ երկար տարիներ,
Որ լինես ազգիդ պահապան ու տէր:
Թէպէտ օջաղդ սըբապղծեցիր
Եւ Ամարնանիդ օրը սկացըիր,
Սակայն մի գուցէ, ընտանիքիդ պէս,
Հայրենիքիդ էլ դու դաւաճանես...»

X

«Դմ նախկին Բէզլար, մոլորւած Բէզլար!
Քո մեծ գործերով թնդում է աշխարհ.
Քեզ են ամենքը օրհնում ու գովում,
Ամեն տեղ բարձր անունդ է հնչում.
Ոչ ոք մինչ այսօր դեռ չի յանդգնել
Յարգըդ, պատիւըդ արատաւորել.
Աննկուն, անյաղթ՝ դու քաջի նման՝
Բարի անունիդ եղել ես պաշտպան.
Քո ընտանիքի պատիւն անրիծ
Դու վեր ես դասել ամբողջ աշխարհից,
Իսկ այսօր... Այսօր սուրբ ընտանիքըդ,
Բարի անունդ, պատիւդ, յարգըդ
Ցեխն ես գցում ինքոդ քո ձեռքով,
Պողծում, անարգում քո յօժար կամքով.
Ինքոդ քեզ համար ծաղը ես նիւթում,
Աշխարհի առաջ քեզ խայտառակում...»

Տոհմիս պատիւը ոտնատակ տւիր,
Ստոր աղախնի հետ ինձ փոխեցիր.
Իշխան տեղովիդ գեղջկուհուն գծուծ,
Գերադասեցիր դու քո ամուսնուց!..

XI

«Անգութ! Ուխտագրուժ! Դու սուրբ Տաճարում,
Աստուծոյ առաջ, տւիր ինձ խոստում,
Որ հաւատարիմ լինես յաւիտեան,
Որ սիրես գու ինձ մինչեւ գերեզման.
Բայց, աւաղ, այսօր քո սրտի միջին
Դու տեղ ես տեկ նենգամիտ օձին!..
Յիշում ես օրը մեր հարսանիքի,
Այն չարագուշակ օրը հրճանքի?
Դու ինձ ասացիր՝ մեր բերդի նման
Սիրտըդ հաստատ է, տոկուն, անսասան.
Դու ինձ ասացիր՝ երկրի երեսին,
Բացի ինձանից, ոչ մի չքնաղ կին
Քո տոկուն սրտին չի կարող տիրել,
Ոչ ոք չի կարող նորան կախարդել...
Սակայն քո սիրտն անառիկ ու քաջ
Ի՞նչպէս ընկնեց Բալայի առաջ...
Ինչու այն օձին, որը նենգաբար.
Քո սիրտը սողաց, չ'արիր շանթահար.
Դու քո թշնամուն, թշառացնողիդ,
Ինչու կուրօրէն սեղմում ես կրծքիդ...»

ХII

«Նենդամիտ Բալա! Բարբարոս դու կին,
Դու խորակեցիր կեանքս հիմնովին,
Ինձ տապակեցիր վշտի խորխորատ,
Քո իշխանուհուն թողիր յուսահատ!..
Խարդաւանանքի դու ցանց հիւսեցիր,
Անմեղ, անարատ մարդուս որսացիր.
Յափշտակեցիր երջանկութիւնս
Եւ հիմնայատակ քանդեցիր տունս. բառաւանց զի
Պսակս անթառամ, թագս սըրագան որ սկզբ զի
Յափշտակեցիր ինձնից յաւիտեան! քառաւ պարագ
Սէլս խլեցիր, քաղդս գողացար,
Կանաչ-կարմիրս սեացըրիր խպառ...
Այժմ տեսնելով իմ դառն կսկիծ,
Չարախնդութեամբ հրճում ես հեռւից.
Բայց աղուլեղի կ'անեմ հրճանքըրտ...
Բնաւ չեմ ներիլ գործած յանցանքըրտ!..
Դու մըմնջող վէրք բացիր իմ կըծքում,
Իմ անքոյժ վէրքից արիւն է հոսում...
Եւ իրեւ դարման, իրեւ սպեզանի,
Միայն քո մահը, մահդ կը լինի!..»

ХIII

Եւ ամբողջ գիշեր տանջւած Ամարնան
Աչքը չը փակեց: Երբ առաւօտեան,
Պայծառ արեւ լեռան յետեկից
Ելաւ, արթնացըրեց երկիրը քնից,—

Վեր կացաւ տեղից թշւառ Ամարնան
Եւ սրտամորմոք նայեց իր մանկան:
Անմեղ Ֆրիդոնը իր օրորցում
Արդէն զարթնել էր. նա չէր հասկանում
Դեռ մարդկանց լեզուն, կեանքը մարդկային—
Աշխարհը նորան անյայտ էր, մթին.
Եւ խարդաւանանք, և կրքեր գծուծ
Դեռ հեռու էին նորա սուրբ հոգուց.
Քերովքի պէս՝ անբիծ էր, արռար,
Շքեղ գարնան պէս՝ ուրախ ու կայտառ:
Անմեղ մանկիկը մօրն էր նայում,
Անհոգ ու զւարթ ցնծում ու ժպտում.
Նա՝ թռչկոտելով՝ իր թաթիկները
Պարզում էր դէպի իր կապանքները,
Կարծես՝ ուզում էր նոցա կտրատել,
Անձուկ որրանից գուրս դալ, աղատւել...

ХIV

Մայրը խոնարհւեց խանդաղատանքով,
Մանկան համբուրեց բուռն գգւանքով:
Մոռայլ մտքերը սիրառ մայրական
Կեղեքում էին ու մաշում նորան:
Եւ խանդոսութեան կրակն անչէջ
Յանկարծ բորբոքւեց նորա հոգու մէջ.
Տոհմական գոսող արիւնն եռաց...
Եւ Ամարնանը ցնցւեց մողեզնած,
Անմեղ մանուկի որրանը վերցըրեց
Եւ սկեսուրի առաջը նետեց.

«Ահա տարաբաղդ իմ ամուսնութեան
Դառն պտուղլ! վերցրու քո թոռան!
Դաւաճան որդուդ ժառանգն է դա՝
Պահիր, պաշտպանիր, մինչև մեծանայ!
Ես Շահնազարի, ես մեծ իշխանի
Աղջիկն եմ գելարդ, աղջիւ, անւանի...
Քանի որ Բէգլար, քո մոլոր որդին,
Սիրեց այն զծուծ, ստոր աղախնին,
Որ արժանի չէ իմ շնուր գառնալ—
Էլ ես չեմ կարող այս տանը մնալ!..»

XV

Պառաւ Հերիքնազ հարսի արարքից
Յուզւած, այլոյլւած՝ վեր թռաւ տեղից,
Թախանձանքներով առաջը կտրեց
Ու դռան շէմքին թեկիցը բռնեց.
«Մէկ մտածիր, տես՝ թէ ինչ ես անում...
Դարձիր, Ամարնան! Միթէ չես խղճում
Անլեզու, ծծկեր քո երեխային.
Տես՝ նա լալիս է, գոչում ցաւագին...
Դու ջախջախնեցիր... Նա ցնցւեց սաստիկ...
Տես՝ դէպի քեզ է մեկնում իր թաթիկ,
Ահա լալիս է, նա քեզ է խնդրում...
Դարձիր Ամարնան, նա ծիծ է ուզում...
Աղջի, սրտումդ խղճմանը չը կայ.
Դու որ փախչում ես, էլ ո՞լ ծիծ կը տայ...
Խեղճին սովաման դու կ'անես այսօք—
Քեզ կը նախատի աշխարհը բոլոր.

Աստւած երկնքից, տես, կը բարկանայ,
Անօրէն գործիդ խիստ պատիժ կը տայ:
Յովք Երանելու պէս եղիր արդար,
Նորա պէս տոկուն և համբերատար!..»

XVI

Հերիքնազ երկար իր խօսքով անգօր
Յուսահատ հարսին կարդում էր յորդոր,
Արցունքը աչքին աղերսում նորան
Զը թողնել տունը, խընայել մանկան.
Նա խոստանում էր խրատել Բէգլարին
Եւ ուղիղ ճամբի բերել վերցափին...
Բայց խանդոտութեան հուրը բորբոքւած
Այրում էր հարսի սիրտը խոցոտւած.
Բուռն նախանձի օձը թունաւոր
Անվերջ խայթում էր կուրծքը վիրաւոր,—
Նա ունկնդիր չէր լինում բնաւին
Իր սկեսուրի թախանձանքներին...
Բայց մի գաղտնի միտք պաշարեց յանկարծ
Հէտ Ամարնանին... Եւ նա մեղմացած,
Բայց գժոխային ժպիտը բերնին,
Շեմքից հեռացաւ, ներս մտաւ կրկին...
Եւ երբ գիշերւան մուայլը խաւար
Աքդէն պատել էր բովանդակ աշխարհ,
Ամարնան ելաւ դդոյշ ու կամաց,
Զարթեցնել տւեց կալային քնած...

պատմաբառաց ով ամեն ըշխմբից ճառապէ
լսու ով ամեն ըշխմբ մնջօքը

XVII

Եւ Մելիք-Բէգլար կրքի բաժակը
Դեռ չէր դատարկել մինչև յատակը,
Անձնատուր եղած նա իր սիրուհուն՝
Դեռ վայելում էր կեանքի քաղցրութիւն.
Եւ Ամարնանի սրուից վիրաւոր
Դեռ չէր չքացել օձը թունաւոր, —
Երբ յանկարծ ծածկեց մուայլը խաւար
Ողջ Գիւլիստանի երկնքը պայծառ: —
Հզօր Մելիքի անդորրը երկին
Համարձակւել էր մօտենալ Լեզգին.
Բահարչին պետք զօրքով անհամար
Արդէն մտել էր Ղարաբաղ աշխարհ: —
Մելիք-Բէգլարի տան փոթորկին
Սիսցաւ նաև շարիք արտաքին...
Բալային գրկեց Բէգլար սիրավառ,
Համբուրեց նորան, ընկաւ ճանապարհ.
Արծիւի նման խայն սլացաւ,
Իր հսկայական ամբոցը հասաւ.
Ողջ Գիւլիստանին նա աււաւ հրաման
Դուրս դալ ուազմի դաշտ միւս առաւօտեան:

XVIII

Եւ հայ քաջերի երակների մէջ
Անվեհերութեան կրակն անշէջ
Արդէն բորբոքւեց... Եւ ամբողջ գիշեր
Մեր կորիձները իրանց մահաբեր

Զէնքելն էին նախապատրաստում. —
Մէկը հրացանի քարն էր փոխում,
Միւսը փամփուշտ էր լցնում վառօդով,
Երրորդը թուրը օծում էր իւղով...
Աստղազարդ, կապոյտ երկնքի տակին, վահան
Գիւլիստան բերդը՝ հսկայի նման՝ լորդու առան
Կանզնած էր հալարա, հալարս ու դաժան.
Եւ Խնջայ գետը՝ սառնորակ ու վէս՝
Արծաթէ չքեղ ժառաւէնի պէս՝
Դրկել էր ժայռը երեք կողմերից
Եւ անվերջ լիզում լանջերը ցածից.
Աշտարակները պարիսպի գլխին
Պահապանի պէս՝ լուռ հսկում էին:

XIX

Մինչդեռ Բէգլարը լցջում էր բերդում
Եւ իր զօրքերին ըսպառազինում,
Իր ասպարանքում, գիշերւայ կիսին,
Միայնակ նստած Բալան ալիրազին,
Մետաքսից թել էր թէշիկով մանում,
Շքեղ ձեռագործ ասեղնագործում:
Բայց աշխատանքն ընկնում էր ձեռից —
Բալան տանջւում էր մուայլ մտքերից...
Արդեօք Բէգլարը անփորձ, ապահով
Արինի դաշտից կը դառնայ շուտով.
Դարձեալ կը տեսնի Բալան Բէգլարին,
Կը տեսնի արդեօք նա իրա ետրին.
Ո՞վ գիտէ, յանկարծ նա հէնց առաջին
Գնդակից կ'ընկնի, կ'աւանդի հոգին...

Կամ գուցէ Բալան՝ չը տեսած նորան։
Ի՞նքը կը մտնի առաջ գերեզման...
Թէպէտ Բէզլարը քաջ է և հզօր,
Բայց մեր կեանքը չէ մշտընջենաւոր...
Մահւան երկվողով Բալան պաշարւած՝
Մտաւ անկողին տանջւած, սարսափած...

XX

Խորին գիշեր է: Խաւարի միջին
Հանդիսատ քնած է անտառը մթին:
Ամեն ինչ լուռ է Խարիսխուտ ձորում.
Միայն վտակն է անդադար վշշում,
Անվերջ կարկաջով զարնուում քարերին
Եւ օրօր երգում չքնաղ Բալային:
Գիշերւայ կիսին, մոայլ խաւարում,
Մի կասկածելի մարդ էր թափառում.
Նա մերթ դիտում էր իր չուրջն ահով,
Մերթ առաջ գալիս զգոյշ քայլերով.
Մերթ մօտենում էր ամաբանոցին,
Մերթ ծառերի տակ թագնուում կրկին:
Եւ նա կամացուկ՝ պատնէչն անցաւ
Ու փորսող տալով պարտէզը մտաւ:
Թփերի տակից նա դիտեց երկար,
Բայց ոչ մի շարժում, ոչ մի ձայն չը կար:
Իր ննջարանում քնած էր Բալան,
Քնած էին և նաժիշտն ու ծառան:
Նա վեր բարձրացաւ աստիճաններով,
Հանդարտ ներս մտաւ ըշգուշութիւնով:

XXI

Դեռ կամաբազարդ ննջարանի մէջ
Ազօտ վառւում էր ճրագն անչէջ:
Եւ ահա բացւեց նորա առաջին
Մի բաքանչելի պատիկը երկնային. —
Թաւշեայ անկողնում կիսամերկ Բալան
Ննջել էր՝ անմեղ հրեշտակի նման.
Փարթամ, անխնամ մագերը չքեղ
Տարածւել էին կլծքին հրաշագեղ,
Որտեղ երկու հատ շամամներ մարմար
Համբուրւում էին ու փարւում իրար.
Էզգեստի տակից նշմարւում էին
Ոտները չքնաղ և աստածային...
Եւ նա անկիւնից, իրբև ուրաւական,
Նայում էր անթարթ՝ հայեացքով դաժան.
Նա տատանում էր... Մոայլ մոքերը
Կեղեքում էին սրտի խորքերը.
Ոճիրից առաջ զգում էր արդէն
Նա իր յանցանքը. . Բայց ահեղ բոսէն
Արդէն հասել էր... Եւ նա մոլեգնած՝
Իր գոհի վերայ յարձակւեց յանկարծ...

XXII

Եղեռնագործ՝ անողոք, ահեղ
Բոնեց գիցուհու մազերը չքեղ,
Յանկարծ փաթաթեց գեղ պարանոցով,
Սկըսեց սեղմել իր բուրք ուժով...

Սարսափած Բալան մահւան բոպէին
Խսկոյն ճանաչեց անդութ՝ Լալային...
Ուզում էր գոչել, բայց արդէն ուշ էր...
Բալան շնչասպառ ահա խեղդւում էր...
Նա աղերսանքով նայեց Լալային,
Նայեց... լրիխուաց... աւանդեց հոգին...
Եւ չարագործը դիմակն առաւ,
Աւար անտառում իսկոյն չքացաւ:
Արդէն կատարեց!.. Մահացաւ Բալան—
Վըրէժը լուծեց խանդուտ Ամարնան!
Մահացաւ Բալան, առանց հրաժեշտի
Վերջին համբոյրի, առանց արցունքի...
Մեռու նա ոչ թէ պաշտովի զլկում,
Այլ նենդ կաշառի ահեղ ճիրանում:
Նորա գագաղը, նորա գերեզման
Խաւար անտառի հորն էր գագան...

XXIII

Երբ չարաբաստիկ գիշերն անցաւ
Եւ հորիզօնը շառագունեցաւ—
Հզօր Բէզլարը ըսպառազինւած,
Պատրաստ կանգնած էր՝ նըմոյզը հեծած.
Վառվուուն սև ձին գետինն էր դոփում,
Բարձր խրխնջում ու սանձը կրծում:
Քաջերը՝ վառւած հայրենի սիրով՝
Լուռ շարւած էին անվեհեր սրտով.
Հլու, հընազանդ իրանց իշխանին՝
Նոքա անհամբեր ըսպառում էին,

Երբ յանկարծ բերդից ելաւ Հերիքնազ,
Յուզւած, սարսափած՝ եկաւ վազէվազ,
Բոնեց Բէզլարի նժոյգի սանձից,
Թախանձեց որդուն յետ կենալ ուազմից: —
Ամբողջ զիշերը մայրը վշտահար
Էլ չէր ունեցել մի բոպէ դադար—
Վատ երազները կեղեքել էին
Նորա մայրական սիրուն ու հոգին:
Նա երազի մէջ տեսել էր յաղթւած
Քաջարի որդուն, յաղթւած ու... մեռած...

XXIV

Նա սարսափահար, արցունքն աչքին՝
Սյժմ կանզնել էր սրդու առաջին,
Նժոյգի սանձը քաշում, ձգձգում,
Նորան արգելում, ինդրում, աղերսում,
Որ այս անդամ նա յետ կենայ կռւից
Զը սպանի մօրը դառը կակիծից...
Բայց Բէզլար յամառ, դաժան, զայրագին՝
Հրեց ծնողին, ատապալեց գետին...
Վիրաւոր մայրը գոչեց յուսահատ.
«Ել ոչ յետ դառնաս դու սաղ-պալամաթ!..»
Եւ մօր անէծքը թնդացրեց ուժգին
Լեռներ ու ձորեր, վերացաւ երկին:
Ահեղ անէծքից Բէզլար սարսափած՝
Նժոյգի վերայ մնաց քարացած:
Հէնց այդ միջոցին՝ կայծակի նման՝
Բօթաբեր լուրը Բալայի գահւան

Շանթեց Մելքին... Իշխանը ցնցւեց,
 Վիրաւոր կրծքից խորը ախ քաշեց...
 «Երբ պատերազմից կը վերադառնամ—
 Եղեռնագործի պատիժը կը տամ!..»
 Դառնագին գոչեց յուսահատ Բէղլար,
 Զիուն մորակեց, ընկաւ ճանապարհ:
 Հաւատարմութեան քողը երեսին՝
 Բալան գնում էր իշխանի կողքին,
 Անուշ խօսքերով նորան ըսփոփում,
 Բայց իր սրտի մէջ գողում, սարսափում:

11XX

Է Պ Ի Լ Օ Գ

Եւ ճանապարհին դաժան Լալային
 Մուայլ մտքերը կեղեքում էին...
 Օ՛, եթէ բացւի ահեղ գաղանիքը,
 Այնժամ անողոք, հզօր Մելքը
 Քարուքանդ կ'անի Լալայի տունը,
 Կը ջնջի նորա ողջ վերդաստունը.
 Անհաւատարիմ նա իր ծառային
 Այնժամ կախ կը տայ Արիւնոտ ծառին,
 Իր սրով նորան նա կը գլխատի,
 Մարմինը մաս-մաս նա կը կտրատի!
 Եւ իր իշխանի ըսպաննալիքից
 Լալան սոսկում էր, սարսափում ահից...

Պատերազմից յետ անշուշտ Մելքը
 Մի կերպ կը բանայ ահեղ գաղտնիքը...
 Օ՛, այնժամ պատժից մէր վախչի Լալան,
 Խօնչպէս աղասւի իշխանից դաժան...
 Բայց... եթէ Բէղլար չը վերապառնայ...
 Ուզմի դաշտի մէջ եթէ չքանայ...
 Օ՛, այնժամ պատժից աղատ է Լալան՝
 Օդում սաւառնող արծիւի նման...

Եւ Մելք-Բէղլար Գեօրգանի ավին
 Ահա հանդիպեց թշնամիներին:
 Ահեղ կովկըն սկըսւեց յանկարծ—
 Երկերըն ուժգին որոտաց, թնդաց...
 Հրացանի ճայթիւն, ահաւոր ճայներ,
 Վիրաւոր կրծքից թռչող հոգւոցներ,
 Խըրախոյս ու տաղնապ, ճիչ և աղաղակ՝
 Տատանում էին լեռներ ու պուրակ...
 Ներկւում էր զետը կարմիր արիւնով,
 Դաշտը ծածկընում Լեզգու դիակով.
 Վառօդի թանձր ծխի ամպերում
 Կարկուտի նման գնդակ էր տեղում...
 Եւ իրարանցման բոպէին խառնակ՝
 Լալան պահել էր հեռու՝ թփի տակ,
 Հրացանը սեղմել նենդաւոր կրծքին,
 Անվստահ, երկբայ՝ գիտում Բէղլարին...

Եւ յանկարծ քաջի կրծքում անվեհեր
Խըսեց կապարը ահեղ, մահարե՛ր...
Բէգլար վիրատոր դոչեց դառնազին,
Զիուց զլորսեց, աւանդեց հոգին!..

4 *b* *r* *g* *h* *m* *n* *p* *q*

Ընթացքը
1992

ՀՀ Ազգային գրադարան



NL0243321

ՀՀ Ազգային գրադարան



NL0243320

ՀՀ Ազգային գրադարան



NL0243319

